

արտաքուստ։ Այս իշխանի կամ թագաւորի մասին ուրիշ ոչինչ չեն հաղորդում մեզ պատմագիրները։

Դուրգենին լաջորդում է իր որդի Դաւիթ Անհողինը, որ նստում է Գուգարաց աշխարհի Շամշուլդէ Բերդում։ սա քաջ մարդ լինելով՝ պատերազմներ է մղում, իր ձեռքն է ձգում Աղուանից աշխարհը և կոչւում է «Աղուանից թագաւոր»։ Սա ևս վախճանուելուց յետոյ թաղում է Սանահնում, իր հօր կողքին։

Դաւիթ Անհողին լաջորդում է իր որդի Կիւրիկեն, որ նորնպէս Աղուանից թագաւոր է կոչւում։ սա իր արքալական գահը հաստատում է Լոռուայ բերդում և մեռնելուց յետոյ թաղում է Հաղբատի վանքում։

Թէ արդեօք Գուգարաց աշխարհի իշխանութիւնը Կիւրիկեից յետոյ ինչ վիճակ ունեցաւ, մինչև երբ մնաց իր բանկախ իշխանութիւն, ոչինչ լայտնի չէ։ մեր մատենագիրներն այնուհետև ալլես ոչինչ չեն հաղորդում այդ իշխանութեան մասին։ Յայտնի է միայն, որ մի առ ժամանակ վրաց իշխանութեան ներքոյ ընկաւ և Խւանէ ու Զաքարէ հայ իշխանների օրերով մի փոքր խաղաղ էր։ Յետոյ արդէն երևի այդ նահանջն էլ, ամբողջ Հայաստանի պէս, վալրենի ցեղերի ոտից կոխան եղաւ և աւերուեց։ նոյն իսկ ալժմ դեռ ևս կենդանի ծերունիների պատմելով իրենք էլ ականատես են եղել լեզգիների խմբական յարձակման, որ շարունակ աւերել, թալանել ու կողոպտել են երկիրը։

IV.

ՍԱՆԱՀՆԻ ՎԱՆՔԸ

Այս՝ իր ժամանակին մեծ հռչակ ունեցաղ վանքի հիմնարկութեան մասին տարբեր տեղեկութիւններ են հաղորդում մեր մատենագիրները։ ոմանց ասելով՝ վանքը շինուել է տասերորդ դարում, Բագրատուննեաց Աշոտ Ողորմածի և թագուհի Խոսրովանուշի ձեռներեցութեամբ։ ոմանք էլ մե-

նաստանի հիմնարկութիւնը վերագրում են իններորդ գարում՝ լունաց Ռումանոս կայսրից հալածուած մի խումբ հայ հոգեռօրականներին. որտեղ հալածուել են Քաղկեդօնի ժողովի վճիռները ընդունելու պատճառով և գալով Սանահին՝ եկեղեցի են կառուցել և միաբանութիւնը կազմելով բնակութիւն հաստատել: Խսկ աւանդութիւնն աւելի հառաջ գալով վայրէ հիմնարկութիւնը կապում է առաքեալների հետ Առաքեալներն այստեղից անցնելիս խաչ են կանգնում, որի տեղը լետոյ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը եկեղեցի է շինում: Վայրէ բուն պատմական շրջանն սկսում է Բագրատունեաց Սմբատ բ. արքայի օրով: Այս եկեղեցասէը արքան գալով Սանահին՝ եպիսկոպոսական վիճակ է հաստատում և վանքին տալիս է կալուածքներ ու ընդարձակ եպիսկոպոսական թեմ, որ մի կողմից ձգւում էր մինչև վրաց սահմանները, իսկ միւս կողմից մինչև Ալբարտի Նիգ և Շիրակ գտնաները: Այդ ընդարձակ կալուածքները վանքի սեպհականութիւնն են մնում նոյն խսկ վրաց իշխանութեան ներքոյ, Բագրատունեաց թագաւորութեան անկումից լետոյ. վրաց արքաները հրովարտակներով հաստատում են վանքի սեպհական կալուածքները: Վրաց իշխանութեան հովանաւորութիւնը մեր վանքերի վերաբերմամբ առաւել ևս զօրեղանում է Խւանէ և Զաքարէ սպասալար հալազն զօրավարների ժամանակ, որոնք վրաց տէրութեան սահմաններն ընդարձակելով մինչև Պարսկաստան, չեն մոռանում իրենց հայրենիքին էլ օգտակար լինել. նրանք հին վանքերը նորոգում, ապահովում են և նորերը շինել տալիս ամեն տեղ, մանաւանդ Գուգարաց աշխարհում, ուր և գտնում են նրանց գամբարանները: Սպասալարների աճիւնը թաղուած է Սանահնում և վրան մատուռ է կոռուցուած:

Ահա այդ երկու շրջաններումն է ծաղկում Սանահնի վանքը. այստեղ են հաւաքւում եկեղեցու գիտնական պաշտօնեաները և հարուստ մատենագարան ու ճեմարան հաստատում: Այնուհետև զանազան բարբարոս ազգեր արշաւելով Հայաստան և Գուգարք՝ քարուքանդ են անում ամեն բան

և նոյնպէս կողոպտում Սանահնի հարստութիւնն ու միաբաններին ցըւում. վանքը կորցնելով իր կալուածքները՝ մնում է անտէր և եթէ՝ ալսօր կանգուն է մնացել ալդ հոլակապ շենքերի խումբը, ալդ էլ իր դիրքի շնորհիւ է եղել Տասնեւութերորդ դարու վերջերին Արդութեանց իշխանական տոհմը տիրելով վանքի նախկին կալուածքները, երբեմն երբեմն ուշագրութիւն դարձեց վանքի վրայ և նորոգել տուեց միքանի եկեղեցիների վնասուած տանիքները:

V.

ՎԱՆՔԻ ՄԱՍՆՐԸ

Սանահնի վանքի բաղկացուցիչ մասերն են. 1) Սուբբ Աստուածածին, 2) Ամենափրկիչ, 3) Սր. Գրիգոր և 4) Սր. Յարութեան եկեղեցիները, երկու գաւիթները, զանգակատունը, մատենադարանը, ճեմարանը և մի մատուռ. Բացի սրանցից կան և երկու բլուրների վրայ կառուցուած 1) Սր. Սարգիս և 2) Սր. Կարապետ եկեղեցիները. Մանրամասն նկարագրենք սրանց ալժմեան դրութիւնը. սկսենք գաւիթներից:

1

Ն Ա. Խ Ա. Գ Ա. Ի Ի Թ.

Խնչպէս քրիստոնէութեան սկզբի դարերում կառուցուած քոլոր վանքերն ու եկեղեցիները, այնպէս էլ Սանահնի վանքի մեծ եկեղեցիները ունին զաւիթ: Քրիստոնէութեան նախնական դարերում գաւիթումն էին կանգնում «երեխարշները», այսինքն գեռ չմկրտուած հասակաւորները և հեթանոսները. նոյնպէս և թերահաւատներն ու ապաշխարողները. դրանք գուրս էին գալիս եկեղեցուց, երբ սարկաւագը բեմից երգում էր. «Որք ոչ էք կարող հազորդիլ լԱստուածալին խօրհուրդս, առ դրունս ելէք և ազօթեցէք», որովհետև մի ոք